ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

հանրակրթական դպրոցի
3-րդ դասարանի դասագիրք

Մաս 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2020

ՀՏԴ 502(075.3)
ԳՄԴ 20.1 g72
Ե 580

Հեղինակներ՝ Ա. Հովսեփյան, Ա. Կարապետյան, Գ. Հովհաննիսյան,
Ն. Տողանյան, Ա. Գյուլբուդաղյան, Լ. Ավագյան

Խմբագիրներ՝ Ա. Հովսեփյան, Ն. Տողանյան

Նկարիչ՝ Հասմիկ Կարապետյան

Ե 580 Ես և շրջակա աշխարհը — 3: Մաս 1: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք /Ա. Հովսեփյան, Ա. Կարապետյան, Գ. Հովհաննիսյան և այլք/ Խմբագիրներ՝ Ա. Հովսեփյան, Ն. Տողանյան; Նկարիչ՝ Հ. Կարապետյան. -Եր.: ՄԱՆՄԱՐ, 2020. -72 էջ:

ISBN 978-9939-62-224-8

ՀՏԴ 502(075.3)
ԳՄԴ 20.1 g72

© Հովսեփյան Ա., Կարապետյան Ա.,
Հովհաննիսյան Գ., Տողանյան Ն.,
Գյուլբուդաղյան Ա., Ավագյան Լ., 2014
© ՄԱՆՄԱՐ, 2014

ԳԼՈՒԽ I

ԵՍ ԵՎ ԻՄ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ

Դաս 1 Ընկերություն

Նորից սեպտեմբեր է, և դու դարձյալ դպրոցում ես: Ուրա՞խ ես, որ եկել ես դպրոց, նորից հանդիպել քո սիրելի ընկերներին և ուսուցչին:

Արդեն երրորդ տարին է, ինչ դուք միասին եք սովորում, դասընկերներ եք: Այս ընթացքում հավանաբար շատ ուրախ օրեր եք անցկացրել. խաղացել եք, երբեմն վիճել եք, խռովել, հետո՝ հաշտվել:

Դիտի՛ր նկարները և ասա՛, թե որ նկարն է քեզ դուր գալիս և ինչու:

Ընկերությունը պահպանելն այնքան էլ հեշտ չէ: Ընկերության մեջ շատ կարևոր են վստահությունն ու անկեղծությունը: Որպեսզի ընկերդ վստահի քեզ, պետք է համոզված լինի, որ դու

իրեն ճիշտն ես ասում: Դրանից ամենևին չի հետևում, թե դու պարտավոր ես ամեն ինչ պատմել ընկերոջդ: Բայց ինչ որ նրան ասում ես, պետք է ճիշտ լինի: Երբեք չի կարելի խաբել ընկերոջը: Մի օր կբացվի սուտը, և ընկերդ այլևս քեզ չի վստահի: Իսկ եթե չլինի փոխադարձ վստահություն, չի լինի նաև իսկական ընկերություն:

Ընկերություն անել՝ նշանակում է նաև օգնել իրար և ուրախանալ մեկը մյուսի հաջողությամբ:

Ընկերությունը միայն միասին խաղալը կամ ուրախանալը չէ: Այն նաև ընկերոջն օգնելն է, մանավանդ երբ նա դժվարություններ ունի: Երբ տեսնում ես, որ ընկերդ օգնության կարիք ունի, մի սպասիր, որ նա քեզ դիմի, փորձիր օգնել նրան:

Ուշադիր նայիր նկարները: Ինչ է պատահում, երբ երեք ընկերներից մեկը սայթաքում է և ընկնում: Այդ դեպքում դու ինչպես կվարվեիր:

Ես արդեն գիտեմ...

- Ընկերության մեջ շատ կարևոր են վստահությունն ու անկեղծությունը:

- Երբեք չի կարելի խաբել ընկերոջը:
- Ընկերոջը պետք է օգնել, մանավանդ երբ նա դժվարություններ ունի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբևիցե օգնե՞լ ես ընկերոջդ, պատմի՛ր այդ մասին:
2. Հիշի՛ր մի դեպք, երբ դժվարության պահին քեզ օգնել է ընկերդ:
3. Ի՞նչ ես կարծում, ընկերդ պետք է միշտ համաձայն լինի քեզ հետ, թե՞ ոչ:

Վատ ընկերը

Երկու ընկեր գնացին անտառ որս անելու:

Հանկարծ նրանց առաջ մի արջ դուրս եկավ: Ընկերներից մեկը ծառը բարձրացավ, իսկ մյուսը պառկեց գետնին, շունչն իրեն քաշեց, որ արջը կարծի, թե նա մեռած է:

Արջը մոտեցավ նրան, հոտոտեց և մեռած կարծելով՝ թողեց գնաց:

Այդ ժամանակ ընկերը ծառից իջավ և ծիծաղելով հարցրեց.

– Արջը քո ականջին ի՞նչ ասաց:

– Արջն իմ ականջին ասաց, որ մյուս անգամ քեզ նման ընկերոջ հետ անտառ չգնամ, որ վտանգ պատահելիս մենակ չթողնի ու փախչի:

(Ըստ Խաչատուր Աբովյանի)

Ասացվածքներ

- Ոչ թե գանձն է ընկեր, այլ ընկերն է գանձ:
- Նա չէ ընկերը, ով խղճում է քեզ, այլ նա՝ ով օգնում է:

Դաս 2 Տղաներ և աղջիկներ

Ո՞ւմ հետ ես ավելի շատ ընկերություն անում՝ տղաների՞, թե՞ աղջիկների: Հաճախ եք վիճում: Նման դեպքում հաշտվելու առաջին քայլն ովքե՞ր են անում՝ աղջիկնե՞րը, թե՞ տղաները:

Մեր դասարանում շատ տղաներ ու աղջիկներ կան: Նրանք իմ դասընկերներն են: Մենք միասին ենք ոչ միայն դասի ժամանակ, այլև դասամիջոցին. միասին խաղում ենք, վազվզում:

Երբ ինչ-որ տոն է լինում կամ՝ որևէ մեկի ծննդյան օրը, մենք միասին զարդարում ենք դասասենյակը, հետևում, որ ամեն ինչ իր տեղում լինի: Այդ ժամանակ բոլորն էլ՝ տղա թե աղջիկ, ինչ-որ գործով զբաղված են լինում: Երբ բոլորն են գործին մասնակցում, այն և՛ հեշտ է, և՛ հետաքրքիր:

Դասերից հետո մենք բոլորս միասին սիրում ենք բակում խաղալ: Խաղեր կան, որ տղաներն ու աղջիկները միասին են խաղում: Բայց խաղեր էլ կան, որ խաղում են միայն տղաները կամ միայն աղջիկները:

Թվարկե՛ք մի քանի խաղ, որ խաղում են միայն աղջիկները կամ միայն տղաները: Թվարկե՛ք խաղեր, որ խաղում են և՛ աղջիկները, և՛ տղաները:

Տանը նույնպես կան գործեր, որոնք սովորաբար անում են աղջիկները (մայրիկները, տատիկները): Օրինակ՝ մայրիկները և տատիկները շատ են սիրում գոր-

ծել, կարել, համեղ ճաշեր պատրաստել, իսկ հայրիկները և պապիկները զբաղվում են տան վերանորոգմամբ, ծանր իրերի տեղափոխմամբ և այլ այդպիսի գործերով:

Դիտե՛ք նկարները և դրանց վերաբերյալ հայտնե՛ք ձեր կարծիքը:

Շատ կարևոր է գիտակցել, որ տղան պետք է լինի քաջ, համարձակ, իսկ աղջիկը՝ կանացի ու նուրբ:

Բոլոր այն տարբերությունները, որ ունեն տղաներն ու աղջիկները, իրար լրացնում են և ոչ թե հակասում միմյանց: Օրինակ, եթե դուք միասին կարգի եք բերում դասարանը, ապա տղաները դասավորում են նստարանները, ջուր են բերում, վերանորոգում են կոտրված դարակները, իսկ աղջիկները մաքրում են հատակը, նստարանները, ջրում են ծաղիկները և այլն: Սակայն սա չի նշանակում, որ նշված աշխատանքները հատուկ «տղայի» կամ «աղջկա» են: Եթե անհրաժեշտ է, ապա տղաներն էլ պետք է մաքրեն հատակը, ջրեն ծաղիկները կամ տանը իրենց հագուստը արդուկեն և այլն:

Պետք է միշտ հիշել, որ կարևոր չէ՝ տղա ենք մենք, թե աղջիկ, պետք է մեզ պահենք որպես բարեկիրթ, քաղաքավարի, բարի ու արդարամիտ մարդ:

Ես արդեն գիտեմ...

- Երբ տղաներն ու աղջիկները միասին են ինչ-որ բան ձեռնարկում, այն ավելի հեշտ ու հետաքրքիր է լինում: Տղաների ու աղջիկների տարբերությունները իրար լրացնում են և ոչ թե հակասում միմյանց:
- Աղջիկ թե տղա, մենք պետք է մեզ պահենք որպես բարեկիրթ, քաղաքավարի մարդ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր դասարանում տղաներն ու աղջիկները ավելի հաճախ միասի՞ն են խաղում, թե՞ առանձին-առանձին: Ո՞ր խաղերն են դրանցից ավելի հետաքրքիր անցնում:
2. Քո կարծիքով՝ ո՞րն է տղայի գործը և ո՞րը՝ աղջկա: Կա՞ն գործեր, որոնք տղաների կարծիքով աղջկա են: Իսկ աղջիկների կարծիքով՝ ո՞ր գործերն են, որ հատկապես տղաները պետք է անեն:

Դաս 3 Իմ իրավունքներն ու պարտականությունները

Դպրոցում, տանը, փողոցում մենք հաճախ լսում ենք՝

- ես իրավունք ունեմ,
- դու պարտավոր ես,
- նա իրավունք չունի:

Իրավունքի ու պարտականության մասին մենք զրուցել ենք նաև երկրորդ դասարանում: Հիմա նորից կխոսենք այդ մասին:

Եթե մենք գրատախտակի մի կողմում գրենք մեր իրավունքները, իսկ մյուսում՝ պարտականությունները, ապա կունենանք մի երկար ցուցակ: Կտեսնենք, որ մենք իրավունք ունենք խաղալու, հանգստանալու, երաժշտություն լսելու և այլն: Մյուս կողմից մենք պարտավոր ենք դպրոց գնալ, դաս սովորել, հարգել միմյանց, պահպանել երթևեկության կանոնները և այլն:

Իրավունքի ու պարտականության մասին պետք է իմանալ, որ դրանք վերաբերում են ոչ միայն առանձին մարդկանց՝ ինձ, քեզ, նրան, այլև մեզ բոլորիս: Գուցե դա զարմանալի թվա. չէ՞ որ բակում խաղալը կամ երաժշտություն լսելը իմ իրավունքն է: Դա, իհարկե, այդպես է, բայց մյուսներն էլ իրենց իրավունքներն ունեն: Պետք է այնպես անել, որ գնդակ խաղալը կամ երաժշտություն լսելը չխանգարի ուրիշների հանգիստը: Մի խոսքով, պետք է այնպես անել, որ մեր խաղը կամ հանգիստը անցկացնելը չխախտի մյուսների իրավունքները: Իրավունքն ու պարտականությունը, այսպիսով, միշտ կապված են իրար:

Իրավունքն այն է, ինչ ես կարող եմ անել, պարտականությունն այն է, ինչ ես պարտավոր եմ, այսինքն՝ ես պետք է անեմ:

Ես արդեն գիտեմ...

- Ես իրավունք ունեմ. նշանակում է՝ ես կարող եմ դա անել:
- Ես պարտավոր եմ. նշանակում է՝ ես պետք է այդ անեմ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ես հասկանում, երբ ասում ես՝
   - ես իրավունք ունեմ,
   - ես պարտավոր եմ:
2. Հիշիր մի դեպք, երբ չես կատարել քո պարտականությունը: Ինչ եղավ այդ ժամանակ:

Տերն ու ծառան

Լինում են, չեն լինում, երկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են՝ ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մտնի, ռոճիկ ստանա, ուղարկի տուն:

Էսպես էլ մեծը վեր է կենում, գնում մի հարուստի մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև կկվի ձեն ածելը: Էս հարուստը մի չլսված պայման է դնում ծառային: Ասում է՝ «մինչև էն ժամանակը թե դու բարկանաս – դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե ես բարկանամ – ես տամ»:

– Ես որ հազար մանեթ չունեմ, որտեղից տամ,– ասում է ծառան:

– Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես:

...Ասում է՝ լավ. համաձայնում է:

Պայմանը կապում են, ու մտնում է ծառայության:

Մյուս օրը վաղ տերը վեր է կացնում ծառային, ուղարկում է արտը հնձելու:

– Գնա՛,– ասում է,– քանի լույս է, հնձի, որ մութն ընկնի, կգաս:

Ծառան գնում է ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգ-նած գալիս է տուն: Տերը հարցնում է.

– Էդ ո՞ւր եկար:

– Դե արևը մայր մտավ, ես էլ եկա:

– Չէ՛, էդպես չի լինի: Ես քեզ ասել եմ՝ քանի լույս է, պետք է հնձես: Արևը մայր մտավ, բայց, տես, նրա ախպեր լուսնյակը դուրս եկավ: Սա ի՞նչ պակաս է լույս տալիս…

– Էդ ո՞նց կլինի…– զարմանում է ծառան:

– Հը՞, դու արդեն բարկանո՞ւմ ես,– հարցնում է տերը:

– Չէ, չեմ բարկանում… Ես միայն ասում էի՝ հոգնած եմ… մի քիչ հանգստանամ…– կըզկըզում է վախեցած ծա-ռան ու գնում է նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչև լուսնյակը մայր է մտնում: Բայց լուսնյակը մայր է մտնում թե չէ, դարձյալ արեգակն է դուրս գալիս: Ծառան ուժասպառ արտում վեր է ընկ-նում:

– Վա՛յ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տված ռոճիկն էլ…– սկսում է հայհոյել հուսահատված:

– Հը՞, դու բարկանո՞ւմ ես,– կանգնում է գլխին հարուս-տը:– Եթե բարկանում ես, մեր պայմանը պայման է: Էլ չասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:



Ու պայմանի ուժով ստիպում է՝ ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում է կրակի մեջ: Հազար մանեթ չուներ, թե տար հոգին ազատեր, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելն անկարելի բան էր: Միտք է անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ է տալիս էդ հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

– Հը՛, ինչ արիր,– հարցնում է փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նստում է, գլուխն էկածը պատմում, ինչպես որ պատահել էր:

– Բան չկա,– ասում է փոքրը,– դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ ես գնամ:

Վեր է կենում հիմի էլ փոքր ախպերն է գնում ծառա մտնում նույն հարուստի մոտ…

(Ըստ Հովհաննես Թումանյանի)

Կարդա՛ հեքիաթն ամբողջությամբ և տե՛ս, թե ինչ եղավ հետո:

Ինչպե՞ս վարվեց կրտսեր եղբայրը: Քո կարծիքով՝ իրավացի՞ էր նա արդյոք:

Դաս 4 Իմ վարքը

«Յոթ անգամ չափի՛ր, մեկ անգամ կտրի՛ր»: Դուք, հավանաբար, լսել եք ժողովրդական այս ասացվածքը: Այն մեզ սովորեցնում է կարևոր գործից առաջ լավ մտածել, ծանրութեթև անել և դրանից հետո միայն գործի անցնել: Չմտածված գործը, խոսքը, արարքը կարող են վատ հետևանքներ ունենալ:

Վերհիշի՛ր որևէ դեպք, երբ քո որևէ արարքի համար ափսոսացել ես, համարել, որ ճիշտ չես վարվել:

Հիշի՛ր, որ քո արարքները ոչ միայն դու ես գնահատում, այլև ուրիշները:

Դիտի՛ր նկարները և գնահատի՛ր նկարում պատկերված երեխաների արարքները:

Մեր կատարած քայլերը տարբեր հետևանքներ կարող են ունենալ ոչ միայն մեզ համար, այլև շրջապատի, մեր հարազատների ու ընկերների համար:

Երբեմն մեր որոշ արարքներ կարող են վտանգավոր լինել, ասենք, մեր անզգուշության հետևանքով կոտրված ապակին կարող է լուրջ վնասվածք հասցնել մեկնումեկին, իսկ չհանգցրած լուցկու հատիկը՝ հրդեհի պատճառ դառնալ:

Մարդուն կարող է վնաս հասցնել, վիրավորել նաև անզգույշ խոսքը: Իսկ մեր լավ վերաբերմունքը, խոսքը կամ օգնությունը կարող են մի ամբողջ օր լավ տրամադրություն հաղորդել դիմացինին:

Հետևաբար, մենք պետք է ուշադիր լինենք նաև խոսելիս: Եկեք ինչ-որ բան ասելուց կամ անելուց առաջ մտածենք, թե ինչի կարող է հասցնել մեր այս կամ այն քայլը:

Ես արդեն գիտեմ...

- Որևէ կարևոր գործ սկսելուց առաջ պետք է լավ մտածել դրա հետևանքների մասին: Մեր արարքները ոչ միայն մենք ենք գնահատում, այլև ուրիշները: Արարքի ճիշտն ու սխալը որոշվում է դրա հետևանքներով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրի՛ր դասի սկզբում բերված ժողովրդական ասացվածքի իմաստը: Իսկ դու ի՞նչ ես մտածում որևէ կարևոր քայլ անելուց առաջ:
2. Թվարկի՛ր քո շրջապատի մարդկանց կողմից թույլ տրված լավ և վատ արարքներ:
3. Մտածի՛ր և գրի՛ր վարքի մի քանի կանոն, որոնք դու կատարում ես կամ կուզենայիր կատարել: Այնուհետև համեմատի՛ր քո գրածները ընկերոջդ գրածների հետ, ապա դասարանի համար միասին ստեղծե՛ք կանոններ:

Վարքի կարևոր կանոններից մեկն ասում է. «Մի՛ արա ուրիշներին այն, ինչ չես ցանկանում, որ քեզ անեն»:

Ասացվածքներ

- Շատ գիտես՝ քի՛չ խոսիր:
- Նախ մի՛տք արա, հետո գո՛ործ արա:
- Շատ լսի՛ր, քիչ խոսի՛ր:

Թոռնիկները

Վանիկը ընկերների հետ ֆուտբոլ էր խաղում:

Այդ միջոցին մի ծեր տատիկ ցանկանում էր փողոցն անցնել: Նկատելով Վանիկին՝ նա խնդրեց.

– Տղա՛ս, օգնի՛ր ինձ մյուս մայթն անցնել:

Տղան դժգոհ քիթը վեր ցցեց.

– Տատիկ, դու էլ ժամանակ ես գտել… Չե՞ս տեսնում, խաղում եմ… Ո՞ւր է քո թոռնիկը՝ Գրիգորը, թող նա օգնի…

Այդ պահին նրանց նկատեց դպրոցից տուն վերադարձող Գրիգորը: Նա մոտեցավ տատիկին, զգուշությամբ ու խնամքով անցկացրեց մայթը: Քիչ հետո Գրիգորը հանդիպելով ընկերոջը՝ ասաց.

– Չե՞ս ամաչում, Վանի՛կ… բա քեզ համար մեկ չի՞, թե ում տատիկն է, տատիկ է, պրծավ-գնաց, ուրեմն՝ պետք է օգնել…

– Ի՞նչ ես խոսում, քո տատիկը առանց այն էլ մեր խաղը խանգարեց…

Գրիգորը ոչինչ չասաց:

Այդ դեպքից մի քանի օր էր անցել: Մի անգամ առավոտյան խանութ գնալիս Գրիգորը տեսավ, թե ինչպես

մի ծերունի տրոլեյբուսից իջավ: Ծերունին ճամպրուկը դժվարությամբ հասցրեց մինչև մայթ: Հետո նստեց ճամպրուկի վրա, հանեց թաշկինակը, սրբեց ճակատն ու գլուխը:

Գրիգորը այդ պահին անցնում էր ծերունու կողքով, մոտեցավ ու կամաց հարցրեց.

– Հեռո՞ւ ես գնում, պապի: Ես քեզ կարող եմ օգնել:

Հետո, առանց պատասխանի սպասելու, նրա ձեռքից վերցրեց ճամպրուկը:

– Շա՛տ ապրես, տղա՛ս, շա՛տ ապրես,– ասաց պապն ու ավելացրեց,– ես հեռու չեմ գնում: Ա՛յ, էն փողոցում են ապրում մերոնք:

Գրիգորը ժպտաց.

– Մենք էլ ենք այդ բակում ապրում, պապի:

Նրանք շարունակեցին զրուցելով քայլել առաջ:

Երբ Գրիգորն ու ծերունին մոտեցան, բակից դուրս վազեց Վանիկը: Նա ուրախ-ուրախ գրկեց ծերունուն ու բացականչեց.

– Պապի ջա՛ն, պապի, այդ դո՞ւ ես... Վա՛յ, ինչպես ես հոգնել...

Ու հանկարծ Վանիկը նկատեց Գրիգորին ու ամոթից գլուխը կախեց: Ապա Գրիգորի ձեռքից վերցրեց ճամպրուկը և շատ կամաց ընկերոջ ականջին ասաց.

– Շնորհակալությո՛ւն, Գրիգոր…

Լ. Մեհրաբյան

Ինչո՞ւ Վանիկն ամաչեց՝ տեսնելով իր ընկերոջը: Ինչպե՞ս եք գնահատում Գրիգորի վարքը:

Դաս 5 Միջավայրը, ուր ես ապրում եմ

Ո՞ւմ հետ ես դու սովորաբար շփվում: Նշի՛ր այն մարդկանց, ում հետ դու ավելի հաճախ ես շփվում օրվա ընթացքում՝ հայրիկը, մայրիկը, ուսուցչուհին… (շարունակի՛ր թվարկել)

Օրվա ընթացքում մենք հաճախ տարբեր տեղերում ենք լինում և շատ մարդկանց հետ շփվում:

Դիտի՛ր նկարները, որտեղ պատկերված է Հասմիկի մեկ օրը:

Օրվա ընթացքում նա տարբեր վայրերում է լինում և տարբեր մարդկանց հանդիպում:

Համեմատի՛ր Հասմիկի օրը քո անցկացրած որևէ օրվա հետ. ի՞նչ նմանություններ և տարբերություններ կնշես:

Յուրաքանչյուր վայրում, ուր մենք լինում ենք, կարող ենք տարբեր իրավիճակների հանդիպել: Օրինակ, երբ մենք գրադարանում ենք, չպետք է բարձրաձայն խոսենք: Իսկ բակում կամ փողոցում, ճիշտ է, մենք խաղում ենք, երբեմն աղմկում, բայց ամեն ինչ չէ, որ կարող ենք անել: Օրինակ՝ չի կարելի թուղթը նետել գետնին, խանգարել հարևաններին և այլն:

Մենք տարբեր կերպ ենք մեզ պահում նաև տարբեր մարդկանց հետ շփվելիս: Բակում ընկերների հետ խաղալիս մենք մի փոքր ավելի ազատ ենք: Մեծերի, ան-

ծանոթ մարդկանց հետ մենք մեզ մի քիչ այլ կերպ ենք պահում: Այդ դեպքում մենք ավելի զուսպ ենք, ավելի քաղաքավարի:

Այսպիսով, այն վայրերը, որտեղ մենք հաճախ լինում ենք, այն մարդիկ, որոնց ճանաչում ենք, որոնց հետ շփվում ենք, կազմում են այն միջավայրը, որտեղ մենք ապրում ենք:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մտածի՛ր և պատասխանի՛ր. ինչպե՞ս պետք է մարդ իրեն պահի՝
   - տանը,
   - գրադարանում,
   - մարզադահլիճում,
   - տրանսպորտում,
   - փողոցում:
2. Ի՞նչ չի կարելի անել՝
   - դասասենյակում,
   - խոհանոցում,
   - թատրոնում,
   - հյուր գնալիս:

Ես արդեն գիտեմ...

- Մենք լինում ենք տարբեր վայրերում և շփվում տարբեր մարդկանց հետ:
- Յուրաքանչյուր վայրում մենք պետք է իրավիճակին հարմար ձևով մեզ պահենք:
- Այն վայրերը, որտեղ հաճախ լինում ենք, և այն մարդիկ, որոնց հետ շփվում ենք, մեր միջավայրն են:

ԳԼՈՒԽ II

ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԻՄ ԿՅԱՆՔԸ

Դաս 6

Իմ առօրյան

Օրվա ռեժիմ. օրվա խելամիտ կազմակերպումը

Համառոտ նկարագրի՛ր, թե ինչպես է սկսվում քո օրը:

Նախորդ դասին մենք խոսեցինք այն մասին, որ բոլորս էլ օրվա ընթացքում տարբեր գործեր ենք կատարում, տարբեր վայրերում ենք լինում: Շատ կարևոր է նաև, որպեսզի մենք կարողանանք ժամանակին կատարել մեր բոլոր գործերը և չհայտնվենք նկարում պատկերված իրավիճակներում:

Դուք սովորում եք դպրոցում, որտեղ լինում եք համարյա ամեն օր և շատ ժամանակ անցկացնում այնտեղ: Դպրոցում ձեր օրն անցնում է խիստ ռեժիմով. այսինքն՝ դասերն սկսվում են ամեն օր՝ ճիշտ նույն ժամին, դրանց տևողությունը միշտ նույնն է, ամեն դասից

հետո լինում է դասամիջոց, երբ դուք հանգստանում եք, խաղում, նախաճաշում և այլն:

Շարունակի՛ր թվարկել, թե էլ ինչով ես զբաղվում դասամիջոցին:

Դպրոցից հետո էլ դուք տարբեր բաներով եք զբաղվում: Ճիշտ է, դպրոցում չեք, սակայն էլի շատ անելիքներ ունեք: Օրինակ՝ դաս եք սովորում, գիրք կարդում, զբաղվում սպորտով, բակում խաղում, հյուր գնում, հեռուստացույց դիտում և այլն:

Շարունակի՛ր թվարկել, թե էլ ինչով ես զբաղվում դասերից դուրս:

Շատ կարևոր է, որպեսզի դուք կարողանաք ամեն ինչ ժամանակին կատարել. և՛ դասերը սովորել, և՛ հյուր գնալ, և՛ խաղալ: Որպեսզի ամեն ինչ հասցնեք, կարևոր է ճիշտ պլանավորել օրը, այսինքն՝ ունենալ **օրվա ռեժիմ**: Բացի այդ՝ պետք է նաև կարգապահ լինել, չուշանալ, ճիշտ ժամանակին կատարել նախատեսված գործերը:

Օրվա ռեժիմը օգնում է մեզ ամեն ինչ ժամանակին կատարել, չհոգնել և ունենալ լավ տրամադրություն:

Ուշադի՛ր դիտիր նկարները և ասա՛, թե ինչով է նման և ինչով է տարբերվում քո օրվա ռեժիմը այս տղայի ռեժիմից:



Կարևոր է նաև այնպես պլանավորել օրվա անելիքները, որ օրվա վերջում համարես, որ օրդ հաջող է անցել և ինչ-որ ձեռքբերում ես ունեցել:

Ուշադի՛ր դիտիր նկարները և ասա՛, թե որ դեպքում է տղան ճիշտ վարվում, իսկ որ դեպքում՝ ոչ:

Այսպիսով, շատ կարևոր է ունենալ օրվա ռեժիմ և հետևել դրան: Այդ դեպքում դուք ճիշտ կվարվեք, չեք հայտնվի դժվար իրավիճակներում և ամեն ինչ կհասցնեք:

Օրվա ռեժիմի նմուշ

7.00	Վերկաց: Մարմնամարզություն
7.30	Լոգանք, նախաճաշ
8.30	Գնալ դպրոց
9.00 – 14.00	Դասեր
14.30	Ճաշ
15.00 -16.00	Հանգիստ, զբոսանք
16.00-18.00	Դասերի պատրաստում
18.00-19.00	Տնային գործեր
20.00	Ընթրիք
21.30	Նախապատրաստվել քնելուն
22.00	Բարի գիշեր

Կարդա՛ օրվա ռեժիմի այս նմուշը և փորձի՛ր կազմել քո օրվա ռեժիմը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Օրական քանի՞ ժամ ես հատկացնում դասերդ սովորելուն:
2. Սիրո՞ւմ ես հեռուստացույց դիտել: Եթե այո, ապա ի՞նչ հաղորդումներ ես դիտում և օրական քանի՞ ժամ ես լինում հեռուստացույցի առջև:
3. Կազմի՛ր քո օրվա ռեժիմը արձակուրդների կամ տոնական օրերի համար:

Ես արդեն գիտեմ...

- Շատ կարևոր է, որպեսզի մենք կարողանանք ամեն ինչ հասցնել կատարել՝ և՛ դասերը սովորել, և՛ հյուր գնալ, և՛ խաղալ:
- Ամեն ինչ հասցնելու համար կարևոր է ճիշտ պլանավորել օրը, այսինքն՝ ունենալ օրվա ռեժիմ:
- Օրվա ռեժիմը օգնում է մեզ ամեն ինչ ժամանակին կատարել, չհոգնել և ունենալ լավ տրամադրություն:

Դաս 7

Ժամանց

Աշխատանք և ժամանց:

Ինչպես կազմակերպել հանգիստը

Ուշադի՛ր դիտիր նկարները և կարդա՛ հեքիաթը:

Մի անգամ մարդը գայլին հաց տվեց: Գայլը կերավ և ասաց.– Օ՜, շատ համով է: Ինչպե՞ս են հացը պատրաստում:

Մարդը ասաց.– Պետք է հողը փորել:

– Այդ ժամանակ արդեն կարելի՞ է հացն ուտել,– հարցրեց գայլը:

– Դեռ ոչ: Պետք է հողը փխրեցնել, պարարտանյութ տալ, ցանել, սպասել մինչև ցորենը հասնի, հնձել, ապա ցորենը տանել ալրաղաց աղալու: Հետո այդուրից հաց պետք է թխել: Ահա այդ ժամանակ արդեն կարելի է ուտել:

Այս ամենը լսելուց հետո գայլն ասաց.

– Օ՜, ինչքան աշխատանք և չարչարանք կա: Չէ՛, ճիշտ է, հացը համեղ է, բայց առանց դրան էլ կապրեմ:

Եվ այդպես մինչև այսօր գայլն ապրում է առանց հացի:

Մտածիր՝

- ո՞րն է ճիշտ. աշխատելը, չարչարվե՞լը, թե՞ անգործ մնալը,
- աշխատել և ուտե՞լ, թե՞ ոչինչ չանել և գայլի նման մնալ առանց հացի,
- քո կարծիքով՝ ինչո՞ւ գայլը հրաժարվեց հացից:

Հեքիաթում գայլը չցանկացավ աշխատել և զրկվեց հացից: Մարդիկ չեն կարող ապրել առանց աշխատան-

քի: Աշխատանքի շնորհիվ մենք ունենում ենք սնունդ, հագուստ, գրքեր, խաղալիքներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքում:

Սովորաբար աշխատում են մեծերը: Իսկ դուք դաս եք սովորում, օգնում ծնողներին, տատիկներին, պապիկներին կամ փոքրիկ եղբորն ու քրոջը: Ձեր արածը ևս աշխատանք է:

Բացի աշխատելուց մարդիկ նաև հանգստանում են: Հանգստանալ չի նշանակում ոչինչ չանել: Հանգիստը կարելի է անցկացնել տարբեր վայրերում և տարբեր ձևերով: Օրինակ՝ բակում խաղալը, երաժշտություն լսելը, հեքիաթներ ընթերցելը, զբոսայգի գնալը... այս ամենը հանգստի ձևեր են:

Շարունակի՛ր թվարկել, թե էլ ինչպես կարելի է հանգստանալ:

Իսկ դու ինչպե՞ս ես աշխատում և հանգստանում:



Այսինքն՝ և՛ աշխատանքը, և՛ հանգիստը, և՛ ժամանցը շատ կարևոր են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Աշխատանքի և հանգստի ո՞ր ձևերն են քեզ ամենաշատը դուր գալիս:
2. Ինչո՞վ ես զբաղվում արձակուրդներին:

Ես արդեն գիտեմ...

- Մարդիկ չեն կարող ապրել առանց աշխատանքի:
- Փոքրերը նույնպես աշխատում են:
- Աշխատելուց բացի մենք նաև հանգստանում ենք:

Առած-ասացվածքներ

- Խոսելը հեշտ է, գործելը՝ դժվար:
- Մարդը ինքը պետք է աշխատի, որ կերածը հալալ լինի:
- Անբանը հաց ուտելիս առողջ է, բանելիս՝ հիվանդ:

Իմացիր, որ դժվար է

Փլավ ուտելն ինչ լա՛վ է,
Բայց եփելը դժվար է:
Բրինձ մաղենք՝ մաղ է պետք,
Անալի է՝ աղ է պետք,
Եփելիս՝ օջախ է պետք,
Կամ նավթ, կամ էլ ցախ է պետք,
Վա՛յ, ցամաքեց, ջուր է պետք,
Շատ է անհամ, յուղ է պետք.
Մեկն էլ պիտի հետևի,
Որ փլավը չվառվի:
Մի քիչ փլավ որ եփենք,
Տե՛ս, թե ինչքան բան է պետք:

Սիլվա Կապուտիկյան

Դաս 8

Ինչպես եմ ես որոշում կայացնում: Իմ նպատակները:

Ի՞նչ կնվիրեիր քո դասընկերոջը կամ դասընկերուհուն ծննդյան օրվա առթիվ:

Բոլոր մարդիկ՝ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը, իրենց կյանքում միշտ էլ որոշումներ են կայացնում: Դա շատ կարևոր է, քանի որ հաճախ լինում են այնպիսի իրավիճակներ, երբ անպայման պետք է որոշում ընդունել: Օրինակ՝ ի՞նչ նվիրել ընկերոջը կամ մայրիկին, ի՞նչ մարզաձև ընտրել, ի՞նչ գիրք կարդալ... **Շարունակի՛ր թվարկել:** Ինքնուրույն որոշում ընդունելն այդքան էլ հեշտ չէ. նույնիսկ մեծերը հաճախ խորհրդակցում են իրենց ընկերների, մտերիմների հետ: Մենք էլ կարող ենք ինքնուրույն որոշումներ ընդունել, խորհրդակցել ծնողների հետ:

Մտաբերի՛ր երկու դեպք.

ա. երբ ինքնուրույն որոշում ես կայացրել,

բ. երբ խորհրդակցել ես ծնողներիդ հետ:

Երբ արդեն կայացրել ես քո որոշումը, պետք է լինես հետևողական: Պետք է հասկանաս, որ դու արդեն պատասխանատու ես քո կայացրած որոշման համար: Այստեղ դու կարող ես շատ դժվարությունների հանդիպել: Այդ դժվարությունները՝ փոքր թե մեծ, միշտ էլ հաղ-

թահարելի են: Այստեղ կարևորը քո կամքի ուժն է, համառությունը, համբերատարությունը:

Կարդա՛ հեքիաթը և տե՛ս, թե փոքրիկ մրջյունը ինչպես է կարողանում հաղթահարել դժվարությունները:

Վազում էր փոքրիկ, սևուկ մրջյունը: Տուն էր շտապում: Իր մրջյունիկների համար մեխակի սերմիկ էր տանում: Մեկ էլ տեսավ՝ ճանապարհին ընկած էր դդումի կորիզ՝ մեծ, քաղցր, հոտավետ:



Մրջյունը մեխակի սերմիկը դրեց մի կողմ: Մեջքին առավ դդումի կորիզը, բայց չկարողացավ պահել, կորիզը սահեց, ընկավ: Մրջյունը դրեց մեջքին, դարձյալ կորիզն ընկավ: Այդպես մրջյունիկը կորիզը շատ անգամ բարձրացրեց մեջքին, բայց կորիզը շարունակ ընկնում էր:



Մեկ էլ մրջունը լսեց մեկի ցածր քրքիջը: Նայեց, տեսավ՝ ճանապարհին նստած է ճպուռը:

– Հազար անգամ կորիզը բարձրացրիր՝ ընկավ,– ասաց ճպուռը,– չհոգնեցի՞ր: Տեսնո՞ւմ ես բան դուրս չի գալիս: Թող ընկած մնա իր համար:

– Բան դուրս չի գալիս նրա մոտ, ով անհաջողությունները հաշվում է,– պատասխանեց մրջունը:

Եվ նորից գործի կպավ, վերջապես կորիզը դրեց մեջքին: Կորիզն այլևս չընկավ. հասցրեց տուն:

Մրջունն ահա այսպես համառ է:

(Ըստ Վ. Սուխոմլինսկու)

Իսկ դու ինչպե՞ս կպատասխանեիր ճպուռին:

Ի՞նչ տվեց համառությունը մրջունին. իսկ եթե մրջունը լսե՞ր ճպուռին (շարունակի՛ր միտքը):

Եղե՞լ է արդյոք քո կյանքում մի դժվարություն, որը դու հաղթահարել ես քո համառության և աշխատասիրության շնորհիվ: Պատմի՛ր այդ մասին:

Այսպիսով, մենք տեսանք, որ յուրաքանչյուր գործ ձեռնարկելիս կարող ես հանդիպել դժվարությունների, սակայն երբեք չպետք է շուտ հուսահատվել, վախենալ, այլ պետք է լինել համառ և գործը հասցնել մինչև վերջ:

Այծերը հանդիպել են դժվարության. օգնի՛ր նրանց ճիշտ որոշում կայացնել:

Երբ մեծանաս, ի՞նչ ես դառնալու: Այս հարցը հավանաբար քեզ հաճախ են տալիս: Իսկ դու ի՞նչ ես պատասխանում:

Դավիթը լավ է նկարում և ցանկանում է դառնալ նկարիչ: Արեգը ցանկանում է դառնալ վարորդ. ճիշտ է, մեքենա վարել չգիտի, բայց անպայման կսովորի, երբ մեծանա: Աստղիկը մարմնամարզությամբ է զբաղվում և երազում է չեմպիոն դառնալ:

Այս երեխաների պես ձեզանից յուրաքանչյուրն էլ ինչ-որ նպատակ ունի: Ունի նաև տարբեր զբաղմունքներ, նախասիրություններ: Օրինակ՝ մեկը զբաղվում է լողով, մյուսը՝ երաժշտությամբ, մեկ ուրիշն էլ հավաքում է նամականիշներ:

Շատ հաճախ այդ նախասիրությունները դառնում են նպատակ:

Այսինքն, զբաղվելով ինչ-որ բանով, անպայման ձգտում ես դրա մասնագետը դառնալ: Սակայն միշտ չէ, որ սիրած զբաղմունքը դառնում է ապագա մասնագիտություն: Երբեմն այն որպես նախասիրություն էլ մնում է: Օրինակ՝ Հայկի մայրիկը փոքր ժամանակ զբաղվել է երաժշտությամբ և պարով, սակայն նա ոչ երաժիշտ է, ոչ էլ պարուհի: Նա ուսուցչուհի է, բայց շատ լավ դաշնամուր է նվագում և շատ գեղեցիկ պարում: Իսկ հայրիկը, որը փոքր հասակում զբաղվել է լողով, հիմա հայտնի մարզիչ է: Այսպիսով, երբեմն նախասիրությունները դառնում են նպատակ, իսկ երբեմն էլ պարզապես օգնում են կյանքում:

Լավ է, երբ կյանքում ունենում ես և՛ նախասիրություններ, և՛ նպատակներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձիր հիշել մի դեպք, երբ օգնել ես որևէ մեկին ճիշտ որոշում կայացնել:
2. Եղե՞լ է այնպես, որ սխալ որոշում ես կայացրել:
3. Պատմիր քո նախասիրությունների մասին:
4. Ո՞րն է քո ամենամեծ նպատակը:

Ես արդեն գիտեմ...

- Կյանքում ունենում ենք և՛ նախասիրություններ, և՛ նպատակներ:
- Ինքնուրույն որոշում ընդունելն այնքան էլ հեշտ չէ: Բոլոր դժվարությունները, լինեն դրանք փոքր, թե մեծ, միշտ էլ հաղթահարելի են: Պետք է լինել համառ և գործը հասցնել մինչև վերջ:

ԳԼՈՒԽ III

ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դաս 9 Աստղեր, Արեգակ

Գեղեցիկ է գիշերային երկինքը: Հազարավոր փայլփլուն աստղեր ցրված են երկնքով մեկ: Երկնքում փայլում է նաև Լուսինը: Նրա արծաթավուն լույսը ողողում է Երկիրը:

Մարդը միշտ նայել է երկնքին և բազմաթիվ հարցեր տվել. օրինակ՝ ի՞նչ են աստղերը, Լուսինը, Արեգակը: Ինչո՞ւ է Արեգակի լույսն ավելի պայծառ, քան Լուսնինը և այլն:



Մարդը տիեզերքում

Երկնային մարմինների երկարատև դիտարկումների շնորհիվ մարդիկ արդեն ստացել են շատ հարցերի պատասխաններ: Դեռևս հեռու անցյալում ծագել է երկնային մարմիններն ուսումնասիրող մի գիտություն՝ **աստղագիտությունը**: Այժմ երկնային մարմիններն ուսումնասիրելու համար տիեզերք են թռչում տարբեր տիեզերական սարքեր: Դրանց միջոցով մարդը շարունակում է բացահայտել Տիեզերքի գաղտնիքները: Տիեզերք է թռչում

նաև մարդը: Երկրից Տիեզերքն ուսումնասիրում են աստղադիտարաններից: Աշխարհում ճանաչված աստղադիտարաններից է մեր Բյուրականի աստղադիտարանը, որը երկար տարիներ ղեկավարել է աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:



Բյուրականի աստղադիտարանը

Վիկտոր Համբարձումյան

Գիշերային երկնքում երևացող անհամար աստղերը լույս և ջերմություն են արձակում: Աստղերը մեզ առկայծող կետերի տեսքով են երևում, որովհետև Երկրից շատ մեծ հեռավորության վրա են գտնվում: Պատկերացնո՞ւմ ես, Երկրից արձակված տիեզերանավը մեզ ամենամոտ աստղին կհասնի միայն հազարավոր տարիներ հետո: **Արեգակը նույնպես աստղ է:** Այն շիկացած գունդ է, որը մշտապես լույս և ջերմություն է ճառագում: Արեգակը Երկրին ամենամոտ աստղն է: Արեգակը մի քանի հարյուր անգամ մեծ է Երկրից: Իսկ ինչո՞ւ է այն մեզ փոքր երևում: Արեգակը մեզանից գտնվում է 150 միլիոն կիլոմետր հեռավորության վրա, այդ պատճառով էլ փոքր է երևում (բարձրում թռչող ինքնաթիռը նույնպես մեզ փոքր թռչունի չափ է երևում, մինչդեռ օդանավակայանում այն շատ մեծ չափեր ունի): Արեգակն է ջերմացնում և լու-



Արեգակը

սավորում մեր երկրագունդը: Առանց Արեգակի Երկրի վրա բույսեր, կենդանիներ և մարդիկ չէին լինի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ են աստղերը:
2. Ինչո՞ւ են աստղերը մեզ շատ փոքր երևում:
3. Ի՞նչ է Արեգակը:
4. Ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբերվում աստղերն ու Արեգակը:
5. Կատարի՛ր աստղային երկնքի դիտարկում: Դրա համար ընտրի՛ր այնպիսի օր, որ երկինքը ծածկված չլինի ամպերով, և այնպիսի տեղ, որ էլեկտրական լույսը չխանգարի:

6. Աստղային երկնքում փորձի՛ր գտնել Մեծ Արջի համաստեղությունը, որի յոթ աստղերն այնպես են դասավորված, որ շերեփ են հիշեցնում (տե՛ս նկարը):
7. Գիշերային երկնքում երբևէ տեսե՞լ ես «վայր ընկնող աստղ»՝ երկնաքար. եթե այո՝ պատմի՛ր այդ մասին:

8. Կարդա՛ և ընկերներիդ պատմի՛ր «վայր ընկնող» աստղերի մասին:

Ես արդեն գիտեմ...

• Երկնային մարմիններն ուսումնասիրող գիտությունը կոչվում է աստղագիտություն: Աստղերը շիկացած նյութերի հսկա գնդեր են: Նրանք լույս և ջերմություն են արձակում: Արեգակը աստղ է: Այն մեզ ամենամոտ աստղն է: Առանց Արեգակի լույսի և ջերմության Երկրի վրա կյանք չէր լինի:

Հանելուկ

Աշխարհում ի՞նչ
Աչեր կան ջինջ,
Ցերեկը՝ քուն,
Գիշերն՝ արթուն:
(մղնտոm)

Վայր ընկնող աստղեր

Բոլորն էլ սիրում են անամպ, խաղաղ երեկոներին դիտել երկինքը, զմայլվել մութ գիշերով, աստղերով և արծաթափայլ Լուսնով: Բայց... սա ի՞նչ է: Հրավառ մի կետ գիծ քաշեց երկնքում և մարեց: «Աստղ ընկավ»,– ասում են տեսնողները:

Ա՞ստղ... Ո՛չ, դա ինչ-որ ուրիշ բան է, քանի որ աստղերը չեն ընկնում: Դրանք տիեզերական տարածության մեջ շարժվող տարբեր չափի

քարեր են, որոնք, ձգվելով Երկրի կողմից, շատ մեծ արագությամբ մտնում են երկրագնդի օդային թաղանթ՝ մթնոլորտ, և այրվում: Այդ այրման կարճատև բռնկումն էլ մենք տեսնում ենք և ասում. «Աստղ ընկավ»:

Երկնային այս փոքրիկ «հյուրերը», որոնք այրվում են ինչ-որ տեղ՝ Երկրից շատ բարձր, կոչվում են ասուպներ, երկնաքարեր:

Հատկապես օգոստոս-նոյեմբեր ամիսներին Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը հանդիպում է տիեզերական շատ քարերի: Ահա թե ինչու այդ ժամանակ հաճախ կարելի է երկնքում տեսնել հրեղեն բռնկումներ:

Միշտ պետք է հիշել. դրանք աստղեր չեն, աստղերը երբեք վայր չեն ընկնում: Դրանք տիեզերական քարեր են, որոնք, մեծ արագությամբ անցնելով երկրագնդի մթնոլորտային շերտով, շփվում են օդի հետ, բռնկվում և մարում: Երբեմն հատուկենտ խոշոր երկնաքարերի, այնուամենայնիվ, հաջողվում է անցնել մթնոլորտի միջով և ընկնել Երկրի վրա:

- Ինչ գիտես աստղային համաստեղությունների մասին:
- Ո՞ր համաստեղության տակ ես ծնվել դու և քո ընտանիքի անդամները:

Դաս 10 Երկիր, Լուսին

Երկիրը, Լուսինը, աստղերը, Արեգակը երկնային մարմիններ են: Արեգակի շուրջը պտտվում են տիեզերական տարբեր մարմիններ, որոնցից գլխավորները մոլորակներն են: Այդ բոլոր մարմինները Արեգակի հետ միասին կազմում են Արեգակնային համակարգը:



Արեգակնային համակարգ Երկրագունդ

Արեգակնային համակարգի մեջ է նաև մեր մոլորակը՝ Երկիրը: Երկիրն իր սեփական լույսը և ջերմությունը չունի. դրանք ստանում է Արեգակից: Դուք արդեն գիտեք, որ Երկիրը շատ ու շատ անգամ փոքր է Արեգակից: Բայց եթե հնարավոր լիներ առանց հանգստանալու ոտքով պտտվել Երկրի շուրջը, ապա այդ ճանապարհորդության համար հարկավոր կլիներ մոտ երեք տարի: Մեր մոլորակի վրա կան օվկիանոսներ և ծովեր, լեռներ և հարթավայրեր, գետեր, լճեր և այլն:

Յուրի Գագարին

Երկիրն ունի գնդի ձև: 1961 թվականին ռուս տիեզերագնաց Յուրի Գագարինը աշխարհում առաջինը տիեզերանավով թռիչք կատարեց դեպի տիեզերք, պտտվեց Երկրի շուրջը և վերևից տեսավ նրա ուռուցիկ մակերևույթը: 1989 թվականին ամերիկյան «Դիսքավերի» տիեզերանավի անձնակազմի հետ տիեզերք թռավ նաև ամերիկահայ տիեզերագնաց Ջեյմս Բաղյանը:

Լուսինը Երկիր մոլորակի մշտական ուղեկիցն է, նրա բնական արբանյակը: Այն միշտ պտտվում է մեր մոլորակի շուրջը և Երկրին ուղղված է միշտ միևնույն կող-

մով: Լուսնի լրիվ պտույտը Երկրի շուրջ տևում է մոտ մեկ ամիս: Լուսինը մեզ ամենամոտ երկնային մարմինն է: Նա մոտավորապես 400 անգամ ավելի մոտ է Երկրին, քան Արեգակը, դրա համար էլ Երկրից դիտելիս այն Արեգակի չափ է երևում: Երկրի նման՝ Լուսինն էլ չունի իր սեփական լույսը: Այն մեզ փայլատակող է երևում, որովհետև անդրադարձնում է Արեգակի լույսը:



Լուսնի մակերևույթը

Աստղադիտակի միջոցով կարելի է դիտել Լուսնի մակերևույթի լեռները և իջվածքները: Լուսինը օդ չունի: Այդ պատճառով էլ այնտեղ կյանք չկա: Լուսնի ուսումնասիրության գործում գիտնականներին մեծապես օգնում են տիեզերական հատուկ սարքերը՝ արհեստական արբանյակները: Երկրից բացի Լուսինը միակ երկնային մարմինն է, որտեղ ոտք է դրել մարդը: Ամերիկացի աստղագնաց Նիլ Արմսթրոնգը 1969 թվականին առաջինը ոտք դրեց Լուսնի վրա:



Նիլ Արմսթրոնգը Լուսնի վրա

Հարցեր և առաջադրանքներ

1. Երկնային ի՞նչ մարմիններ գիտեք:
3. Երկնային ի՞նչ մարմին է Երկիրը:
4. Բնական ի՞նչ արբանյակ ունի Երկիրը:
5. Ինչպե՞ս են մարդիկ ուսումնասիրում Լուսինը և երկնային մյուս մարմինները:
6. Ինչո՞վ է Լուսինը նման և ինչո՞վ է տարբերվում Արեգակից:
7. Գիշերային երկնքում անզեն աչքով կամ հեռադիտակով դիտի՛ր Լուսինը: Նկարագրի՛ր (կամ նկարի՛ր), թե ինչ տեսք ունի Լուսինը:
8. Մեկ ամսվա ընթացքում դիտի՛ր Լուսնի փուլերը և նկարագրի՛ր, թե ինչ փոփոխություններ են կատարվում:

Ես արդեն գիտեմ...

- Աստղերը, Արեգակը, Երկիրը, մոլորակները, Լուսինը երկնային մարմիններ են: Երկիրը Արեգակի շուրջը պտտվող մոլորակներից մեկն է: Լուսինը Երկրի բնական արբանյակն է:

Հանելուկ

Խավարի մեջ փայլում է նա,
Լույսը բացվեց՝ կանհետանա:

(ղվուաղ)

ԳԼՈՒԽ IV

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՎԱ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ

Դաս 11 Տարվա եղանակները

Դու, հավանաբար, նկատել ես, որ բնության մեջ անընդհատ տեղի են ունենում փոփոխություններ: Բնության մեջ կատարվող որոշ փոփոխություններ կարող ենք անմիջապես տեսնել: Օրինակ՝ գիշերվա ու ցերեկվա հերթափոխումը: Դու ինքդ էլ քո կամքից անկախ ենթարկվում ես այս փոփոխությանը: Վաղ առավոտյան արթնանում ես, գնում դպրոց: Այնուհետև գալիս ես տուն, հանգստանում, սովորում դասերդ, խաղում և երեկոյան պառկում քնելու: Հետաքրքիր է, իսկ ինչպե՞ս է տեղի ունենում գիշեր-ցերեկ փոփոխությունը: Երկիրը պտտվում է իր առանցքի շուրջը, ինչը տևում է մեկ օր: Ինչպես տեսնում ես նկարներում, երկրագնդի այն մասը, որն ուղղված է դեպի արևը, լուսավորված է, հետևաբար այնտեղ ցերեկ է: Իսկ Երկրագնդի չլուսա-

վորված կողմում գիշեր է: Երկրի պտույտի հետևանքով գիշերը փոխարինվում է ցերեկով, իսկ ցերեկը՝ գիշերով:

Տարվա ո՞ր եղանակն է պատկերված յուրաքանչյուր նկարում: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

Տարվա ընթացքում կատարվող բոլորիս հայտնի փոփոխություններից է տարվա եղանակների հերթափոխը: Տարին ունի 4 եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Տարվա ամեն եղանակին փոխվում է և՛ կենդանի, և՛ անկենդան բնությունը:

Հիշի՛ր կենդանի և անկենդան բնության մասերը:

Իսկ ինչո՞ւ են առաջանում տարվա եղանակները: Դրա գլխավոր պատճառն այն է, որ Երկիր մոլորակը պտտվում է Արեգակի շուրջը: Իր մեկ պտույտն Արե-

գակի շուրջը Երկիրը կատարում է մոտ 365 օրվա ընթացքում: Այդ ժամանակամիջոցը կոչվում է **տարի**: Տարվա այն ժամանակահատվածում, երբ երկնքում Արեգակը շատ բարձր դիրքում է լինում, ցերեկներն ավելի երկար են լինում, քան գիշերները: Արևի ճառագայթներից երկրի մակերևույթը ուժեղ տաքանում է: Այդ ժամանակ ամառ է: Իսկ երբ Արեգակի դիրքն այնքան էլ բարձր չէ, ապա նրա ճառագայթներն ավելի քիչ են տաքացնում Երկիրը, իսկ գիշերներն էլ երկարում են: Այդ ժամանակ ձմեռ է: Ուրեմն տարվա եղանակների առաջացումը պայմանավորված է երկնքում Արեգակի բարձրությամբ և ցերեկվա տևողությամբ:

Հաջորդ դասերին դու կիմանաս, թե ինչ է կատարվում բույսերի, կենդանիների և մարդկանց կյանքում տարվա տարբեր եղանակներին:

Հարցեր

1. Ինչպե՞ս են առաջանում գիշերը և ցերեկը:
2. Ո՞րն է տարվա եղանակների առաջացման գլխավոր պատճառը:
3. Ի՞նչ է տարին:
4. Ինչո՞ւ է տարվա եղանակների հերթափոխ տեղի ունենում:
5. Տարվա ընթացքում բնության մեջ ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում:

Ես արդեն գիտեմ...

- Երկրի պտույտի հետևանքով գիշերը փոխարինվում է ցերեկով, իսկ ցերեկը՝ գիշերով: Տարվա եղանակներն առաջանում են, որովհետև Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը: Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է մոտ 365 օրվա ընթացքում: Այդ ժամանակամիջոցը կոչվում է տարի: Տարվա եղանակների առաջացումը պայմանավորված է տարվա ընթացքում երկնքում Արեգակի բարձրությամբ:

Դաս 12 Բույսերն ու կենդանիները աշնանը

Տարվա ո՞ր եղանակն է պատկերված նկարներում: Ինչո՞ւ ես այդպես կարծում: Թվարկի՛ր աշնան ամիսները:

Աշնանը բնության մեջ տեղի են ունենում մի շարք փոփոխություններ: Տաք ու արևոտ օրերը կամաց-կամաց սկսում են ցրտել: Հաճախ են տեղում անձրևներ, իսկ աշնան վերջում՝ նաև ձյուն: Հողը դառնում է խոնավ և սառը:

Աշնանը ծառերի և թփերի տերևները փոխում են իրենց գույնը և թափվում են: Հետաքրքիր է տերևաթափին հետևելը: Երբևէ փորձել ես դա անել:

Մշտադալար ծառերը տերևաթափ չեն լինում, օրինակ՝ եղևնին, սոճին: Խոտերը նույնպես փոխում են իրենց գույնը, իսկ այնուհետև՝ չորանում:

Դու արդեն գիտես, որ աշնանը թռչունների կերը խիստ պակասում է: Նախ պակասում են պտուղներն ու սերմերը, ապա անհետանում են միջատները՝ բզեզները, թիթեռները, մոծակները, ճանճերը, որոնցով սնվում են թռչունները: Այդ պատճառով շատ թռչուններ, երամ կազմած, չվում են տաք երկրներ:

Աշնանը փոխվում է նաև վայրի կենդանիների կյանքը: Նրանք ևս պատրաստվում են ձմռանը: Հոկտեմբեր ամսից բոլոր կենդանիների մորթին դառնում է խիտ և խավոտ: Մի շատ հետաքրքիր բան էլ է կատարվում որոշ կենդանիների հետ. օրինակ՝ նապաստակի մորթու գույնը փոխվում և դառնում է սպիտակ, իսկ սկյուռինը՝ մոխրագույն:

Մտածի՛ր և փորձի՛ր պատասխանել, թե ինչու է այդպես լինում:

Ձմռանը նախապատրաստվելիս կենդանիներից շատերը կեր են կուտակում իրենց բներում: Օրինակ՝ մեկ սկյուռը իր բնում կարող է կուտակել մինչև 15 կգ ընկույզ, սունկ, զանազան սերմեր: Իսկ ահա արջը ամռանը և աշնանը, երբ կերն առատ է, ուժեղ սնվում է, ճարպ է կուտակում իր օրգանիզմում, որն օգտագործվում է ձմեռային երկարատև քնի ժամանակ: Աղվեսը, նապաստակը և գայլը ձմռան պաշար չեն կուտակում, որովհետև նրանք ձմռանն էլ կարող են կեր ճարել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են ամենատեսանելի փոփոխությունները աշնանը:
2. Ամռան համեմատ աշնանն ինչպիսի՞ փոփոխություններ են կրել քո բնակավայրի ծառերը, թփերը և խոտերը:
3. Ինչո՞ւ են աշնանը թռչունները չվում տաք երկրներ:
4. Մտածիր՝ ամռա՞նը, թե՞ աշնանն են շատ միջատները: Ինչո՞ւ:
5. Ինչպե՞ս են նախապատրաստվում ձմռանը տարբեր կենդանիներ:

Ես արդեն գիտեմ...

- Աշնան սկզբում օրերը դեռևս տաք են, սակայն հետագայում դառնում են սառը և ցուրտ: Հաճախ են տեղում անձրևներ: Խոնավ ու սառն է դառնում հողը: Աշնանը սկսվում է տերևաթափ: Թռչունները երամ կազմած չվում են տաք երկրներ: Աշնանը փոխվում է նաև վայրի կենդանիների կյանքը: Նրանք նախապատրաստվում են ձմռանը:

Հանելուկ

Տարվա տարբեր եղանակին,
Տարբեր գույնի մուշտակ հագին,
Քնում է միշտ աչքերը բաց,
Վախկոտ է խիստ, շուրթը՝ ճաքած:

(իմաստոմիտ)

Ձեռքեր չունի,
Ներկեր չունի,
Դաշտն է ներկում
Հազար գույնի: **(դուշտ)**

Աշուն

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամին,
Քշում է, տանում
Տերևը դեղին:
Տխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

Հովհաննես Թումանյան

Գիտե՞ք, որ...

- Գիտնականները պարզել են, որ մեկ օրում երաշտահավը և սարյակը ուտում են իրենց սեփական քաշից 2 անգամ ավել միջատներ:
- Կկուն մեկ ժամում ուտում է միջատների մոտ 100 թրթուր, ընդ որում այնպիսիք, որոնց ուրիշ թռչուններ չեն ուտում:
- Միջյունը օրվա ընթացքում ուտում է այնքան վնասատու միջատ, որքան երաշտահավը 2 ամսվա, իսկ փայտփորիկը՝ 20 օրվա ընթացքում: Հետաքրքիր է, որ մրջյունները չեն վնասում օգտակար միջատներին:
- Մեկ օրում զատիկը ուտում է մինչև 270 մանր միջատ, մորեխը՝ մեկ ժամում մինչև 20 ճանճ:

Դաս 13 Բույսերն ու կենդանիները ձմռանը

Տարվա ո՞ր եղանակն է պատկերված նկարում: Ինչո՞ւ ես այդպես կարծում: Թվարկի՛ր ձմռան ամիսները:

Ձմեռը եկավ: Երկինքը գրեթե միշտ ծածկված է ամպերով: Ձյուն է գալիս: Շուրջբոլորն ամեն ինչ ծածկված է ձյան վերմակով: Գետերը, գետակներն ու լճերը ծածկված են սառույցով: Արևոտ օրերը ավելի հազվադեպ են: Ձմռանը արևը շատ թույլ է տաքացնում և լուսավորում: Երբեմն նույնիսկ սառնամանիքներ են լինում: Մեզ մոտ՝ Հայաստանում, ամենից ցուրտ ամիսը հունվարն է: Ձմռանը լինում են նաև արևոտ օրեր. այդ ժամանակ ձյունը այնքան պայծառ է փայլում, որ շլացնում է աչքերը:

Ձմռանը հաճախ հանդիպող շատ գեղեցիկ երևույթ է եղյամը: Հավանաբար նկատել ես, որ հատկապես

պարզկա օրերին՝ վաղ առավոտյան, ծառերի ճյուղերը, էլեկտրական լարերը, լուսամուտների ապակիները պատվում են սառցե բյուրեղներով: Դրանք կարծես կախարդական նախշեր լինեն: Թվում է, թե նկարչի վրձինն է դրանք ստեղծել, երբ մենք քնած ենք եղել: Մենք արդեն գիտենք, որ աշնանը ծառերից և թփերից շատերը տերևաթափ են լինում, սակայն ձմռանը կարելի է տեսնել այնպիսի ծառեր և թփեր, որոնց վրա պահպանվում են պտուղներն ու չոր տերևները:

Տեսե՞լ ես այդպիսիք: Պատմի՛ր դրանց մասին:

Ձմռանը կանաչ են մնում փշատերև ծառերը (վերհիշի՛ր դրանցից մի քանիսի անունները): Դրանցից է մեր բոլորի ամենասիրելի ծառերից մեկը՝ եղևնին, որը Նոր տարուն զարդարվում և դառնում է տոնածառ:

Ձյան վերմակի տակ շատ բույսեր պաշտպանվում են սառնամանիքներից: Ձյան հաստ շերտը տաք հագուստի դեր է կատարում հողի, այնտեղ գտնվող բույսերի սերմերի համար:

Թեև աշնանը թռչունները չվում են տաք երկրներ, սակայն շատերն էլ մնում են մեզ մոտ ձմեռելու: Նրանք մնում են, որովհետև ձմռանն այստեղ կարողանում են կեր հայթայթել: Այդ թռչունները սնվում են ծառերի վրա պահպանված բողբոջներով, սերմերով և պտուղներով, թաքնված միջատներով: Նրանք կեր կարող են գտնել նաև մարդկանց բնակավայրերի մոտակայքում:

Որպեսզի թռչունները սովից չսատկեն, հաճախ կերակրի՛ր նրանց: Պատրաստի՛ր և ծառերից կախի՛ր կերակրասեղաններ:

Ձմռանը շատ կենդանիներ (նապաստակը, գայլը, աղվեսը) գրեթե ամբողջ օրը կեր են փնտրում: Օրինակ՝ կուշտ լինելու համար աղվեսը մեկ օրում պետք է ուտի մինչև 20 մուկ: Մյուս կենդանիները, օրինակ՝ սկյուռը, օգտվում են իրենց պաշարներից: Արջը, գորտը, մողեսը ձմռանը քուն են մտնում:

Հարցեր

1. Ինչո՞վ է տարբերվում ձմեռը տարվա մյուս եղանակներից:
2. Թվարկի՛ր այն փոփոխությունները, որ տեսնում ես ձեր բակում ձմռանը:
3. Ինչպե՞ս են ձմեռն անցկացնում տարբեր կենդանիները:

Առաջադրանքներ

Շարունակի՛ր դիտարկումներդ: Ձմեռային դիտարկումների ժամանակ փորձի՛ր ստանալ հետևյալ հարցերի պատասխանները և արդյունքները գրի առ տետրում.

1. Ինչպիսի՞ եղանակ է: Ինչպիսի՞ն է երկինքը: Ինչպե՞ս է լուսավորում արևը: Քամո՞ւ է, թե՞ ոչ: Քամու ուժգնությունը (թույլ, ուժեղ): Ցերեկնե՞րն են ավելի երկար, թե՞ գիշերները: Այս դիտարկումները համեմատի՛ր աշնանային դիտարկումների հետ:
2. Ի՞նչ վիճակում է ձեր բնակավայրին ամենամոտ գետի կամ լճի ջուրը՝ սառա՞ծ է, թե՞ ոչ:
3. Նայի՛ր, թե ինչպես է փոխվել անտառի (այգու, պուրակի, առանձին ծառերի) ընդհանուր տեսքը՝ աշնան համեմատ:
4. Ի՞նչ է կատարվել հողի հետ: Հողի վրա կա՞մ արդյոք ձյուն:
5. Քանոնով չափի՛ր և համեմատի՛ր ձյան հաստությունը բաց տեղում և ծառերի տակ:
6. Ի՞նչ թռչուններ են մնացել ձմեռելու: Կերակրի՛ր թռչուններին:
7. Ինչպե՞ս է փոխվել ընտանի կենդանիների կյանքը ձմռանը: Ինչո՞ւ նրանց արոտավայրեր դուրս չեն բերում: Ինչո՞վ է ձմռանը ընտանի կենդանիների կյանքը տարբերվում վայրի կենդանիների կյանքից:
8. Ինչպե՞ս է փոխվել մարդու առօրյան (գյուղում, քաղաքում)՝ աշնան համեմատ:
10. Ձմռանը սովորաբար ինչո՞վ ես զբաղվում:

Ես արդեն գիտեմ...

• Ձմեռը տարվա ամենացուրտ եղանակն է: Ամենուրեք ձյուն է ու սառույց: Տերևաթափված են ծառերն ու թփերը: Հողը ծածկված է ձյան վերմակով: Փշատերև ծառերից շատերը ողջ տարին պահպանում են իրենց կանաչ զգեստը: Ձմեռող թռչունները, վայրի կենդանիների մի մասն ամբողջ օրը կեր են

փնտրում: Որոշ կենդանիներ ձմռանը՝ մինչև գարուն, քուն են մտնում:

Հանելուկ

Հողմ ու բքին կանգնած դրսում,
Թեև մերկ է, բայց չի մրսում,
Հաստանում է փաթիլներից
Եվ մաշվում է Արեգակից: **(նմոյղոջ)**

Տետրում կամ նկարչության ալբոմում նկարի՛ր ձմռան տեսարաններ:

Հետաքրքիր է իմանալ

Խաչկտուցները (անտառային թռչուններ) ամբողջ ձմեռ կերակրվում են սոճու և եղևնու սերմերով: Այդ բույսերի սերմերը հասունանում են ձմռանը: Դա նշանակում է, որ խաչկտուցի համար կերը առատ է տարվա այդ եղանակին: Դրա համար էլ այդ թռչունները ձագեր ունենում են հենց ձմռանը: Շուրջբոլորը ձյուն է ու սառնամանիք, իսկ խաչկտուցների բներում ձագեր են:

Դաս 14 Բույսերն ու կենդանիները գարնանը

Տարվա ո՞ր եղանակն է պատկերված նկարներում: Ինչո՞ւ ես այդպես կարծում: Թվարկի՛ր գարնան ամիսները:

Երբ մեր շուրջը ամենուրեք ձյունը սկսում է հալվել, նշանակում է գարուն է եկել: Գարնանն ավելի տաք է,

քան ձմռանը: Գարնանային ջերմությունից տաքանում է նաև հողը: Գարնանային արևի ջերմությունից հալչող սառույցի և ձյան ջրերը հոսում-լցվում են գետերն ու գետակները, լճերն ու ջրամբարները: Թե ինչ է պատահում, երբ գետերում շատանում է ջրի քանակը, կիմանաս մյուս դասերից:

Գարնանը հաճախ են անձրևներ գալիս: Երկնքում փայլատակում է կայծակը, լսվում է որոտը:

Վաղ գարնանը տաքացած հողից նախ իրենց գլխիկներն են հանում խոտաբույսերը, ապա՝ ձնծաղիկն ու կապուտաչյա մանուշակը: Հետո սկսում են տերևակալել ծառերն ու թփերը: Բնության աննման գեղեցկությունը վրա է հասնում, երբ ծաղկում են ծառերն ու թփերը: Շուրջբոլորդ գույնզգույն ծաղիկներ են՝ իրենց անուշահոտ բուրմունքով: Հայտնվում են միջատները՝ մեղուն, մրջյունը, թիթեռը, զատիկը:

Գարնանը տաք երկրներից մեզ մոտ են վերադառնում չվող թռչունները. առաջիններից են արագիլն ու ծիծեռնակը:

Ուրիշ ի՞նչ թռչուններ գիտես, որ գարնանը վերադառնում են տաք երկրներից:

Գարնանը թռչունները բույն են շինում և դրանցում ձվեր դնում: Շուտով այդ ձվերից ձագեր են դուրս գալիս:

Երբեք բներից ձվեր և ձագեր մի՛ վերցրու:

Գարնանը իրենց ձմեռային երկարատև քնից արթնանում են շատ կենդանիներ՝ արջը, մողեսը, օձը, գորտը: Նրանցից շատերը ձագեր են ունենում: Փոխվում է շատ կենդանիների մորթու գույնը:

Գարունը կենդանիների համար շատ կարևոր շրջան է. նրանց պետք է պաշտպանել և խնամքով վերաբերվել: Գարնանը խստիվ արգելվում է կենդանիների որսը:

Հարցեր

1. Ինչի՞ց ենք իմանում, որ գարուն է եկել:
2. Ի՞նչ է տեղի ունենում ձյան և սառույցի հետ գարնանը:
3. Գարնանն ինչպիսի՞ փոփոխություն է կրում բուսականությունը:
4. Գարնանն ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում թռչունների և կենդանիների կյանքում:

Առաջադրանքներ

Գարնանը ևս կատարի՛ր դիտարկումներ: Դիտարկումների արդյունքները գրառի՛ր տետրում: Այդ դիտարկումները կատարի՛ր հետևյալ հարցերի շուրջ:

1. Ինչպիսի՞ եղանակ է: Ինչպիսի՞ն է երկինքը: Ինչպե՞ս է լուսավորում արևը: Այս դիտումները համեմատի՛ր ձմեռային դիտումների հետ:
2. Ցերեկնե՞րն են ավելի երկար, թե՞ գիշերները:
3. Ավելի հաճախ անձրև՞ է գալիս, թե՞ ձյուն:
4. Ավելացե՞լ, թե՞ պակասել է գետերի ջուրը: Ինչո՞ւ:
5. Եթե շրջապատում ձյունը չի հալվել, նշի՛ր, թե որտե՞ղ է այն պահպանվել:
6. Ի՞նչ է պատահել հալված ձյան ջրերի հետ:
7. Ինչպե՞ս է փոխվել հողը գարնանը:
8. Դիտի՛ր և ասա՝ ինչպե՞ս է փոխվել անտառը (պուրակը, այգին, առանձին ծառերը)՝ ձմռան համեմատ: Շրջապատում կա՞ն արդյոք ծաղկած ծառեր: Նշի՛ր, թե որոնք են:
9. Ինչպե՞ս են փոխվել խոտաբույսերը գարնանը: Ո՞ր ծաղիկներն են ամենից շուտ բացվել:
10. Ուշադրությո՛ւն դարձրու թռչուններին. վերադարձե՞լ են արդյոք չվող թռչունները: Ինչո՞վ են զբաղված թռչունները գարնանը:
11. Սովորաբար ինչո՞վ են զբաղվում քո շրջապատի մարդիկ գարնանը:

Դիտարկումների արդյունքները գրառի՛ր տետրում:

Ես արդեն գիտեմ...

- Գարնանը սկսվում է ձնհալը, և այդ ջրերը լցվում են գետերն ու լճերը: Գարնանը, ինչպես աշնանը, հաճախ են անձրևներ գալիս: Դրանք ուղեկցվում են կայծակ-որոտով:

Գարնան ավետաբեր ծաղիկները ձնծաղիկն ու մանուշակն են, ավետաբեր թռչունները՝ արագիլն ու ծիծեռնակը: Գարնանը ծաղկում են ծառերն ու թփերը, վերադառնում են աշնանը չված թռչունները: Ձմեռային խոր քնից արթնանում են միջատներն ու վայրի շատ կենդանիներ:

Հանելուկ

Ի՞նչ ամիս է, ի՞նչ ամիս,
Ձնծաղիկով է գալիս,
Մեկ բուք-բորան է անում,
Մեկ տաք օրեր է տալիս: **(տմոյ)**

Փորձի՛ր հիշել, թե էլ ինչ հանելուկներ գիտես գարնան վերաբերյալ:

Գարուն է գալիս

Ծիլերն են դաշտում կանաչին տալիս,
Դռները բացեք, գարուն է գալիս:
Ձմեռը հալվել, դարձել է առու,
Դարձել է առու, դարձել է վտակ,
Արաքսի հունով գնում է հեռու,
Գնում է դեպի ծովը անհատակ:
Հոգնած թևերը քսելով ամպին,
Կրծքին դեռ խոնավ ծվենը նրա,
Արագիլն իջել Արաքսի ափին,
Հանգստանում է մի ոտքի վրա:
Ժպտալուց առաջ բողբոջն է լալիս,
Դռները բացեք, գարուն է գալիս:

Համո Սահյան

Դաս 15 Բույսերն ու կենդանիները ամռանը

Տարվա ո՞ր եղանակն է պատկերված նկարներում (էջ 60, 61)։ Ինչո՞ւ ես այդպես կարծում։ Թվարկի՛ր ամռան ամիսները։

Ամառը տարվա ամենատաք եղանակն է։ Տարվա այդ եղանակին ցերեկները ամենաերկարն են, իսկ գիշերները՝ ամենակարճը։ Երկինքը հիմնականում կապույտ է և անամպ։ Ամռանը երբեմն կարող են անձրևներ, նույնիսկ՝ կարկուտ տեղալ։ Կարկուտը բնության աղետաբեր երևույթներից է։

Ի՞նչ ես կարծում՝ ինչո՞ւ։

Մեզ մոտ՝ Հայաստանում, ամենատաք ամիսը հուլիսն է։ Ամռանն ամենուր շարունակում են ծաղկել ծաղիկները։ Ծառերն ու թփերը պտղակալում են։ Հունիսից արդեն հասունանում են ծիրանը, բալը, թութը, ամռան վերջերին՝ խաղողը։

Ուրիշ ի՞նչ մրգեր գիտես, որոնք հասունանում են ամռանը։

Ծառից ծառ, թփից թուփ աշխուժորեն թռչում են ժրաջան մեղուներն ու բազմագույն թիթեռները, զատիկները և այլ բզեզներ: Աշխույժ եռուզեռ է նաև մրջնանոցում: Ողջ օրն անդադար աշխատում են մրջյունները:

Թռչունների բներում հայտնվել են ձագեր: Նրանք արդեն դուրս են եկել ձվից: Հոգատար թռչուն-ծնողներն ամբողջ օրը զբաղված են իրենց ձագերին խնամելով և կերակրելով: Ձագերին աստիճանաբար թռչել են սովորեցնում, որպեսզի աշնանը միասին չվեն տաք երկրներ:

Իրենց ձագերի հետ են նաև վայրի կենդանիները: Նրանց մասին հոգ տանելուց բացի՝ ծնողներն իրենց ձագերին նախապատրաստում են ինքնուրույն կյանքի. նրանց սովորեցնում են կեր հայթայթել, որս անել:

Ամռանը դպրոցներում արձակուրդ է: Բոլորս հանգստանում ենք, հաճախ ենք լինում բնության գրկում, խաղում զանազան խաղեր:

Բնության գրկում եղած ժամանակ միշտ դիտի՛ր շուրջդ, փորձի՛ր ունեցած գիտելիքներովդ բացատրություններ գտնել քեզ շրջապատող առարկաների և երևույթների մասին: Հետևի՛ր բնության պահպանության կանոններին:

Հարցեր

1. Ո՞րն է տարվա ամենատաք եղանակը:
2. Ամռանը ինչպիսի՞ փոփոխություններ են կրում բույսերը:
3. Ի՞նչ փոփոխություններ կարելի է տեսնել կենդանիների մոտ:
4. Ի՞նչ ես անելու ամռանը:

Առաջադրանքներ

Դիտարկումներ ամռանը
(ամառային հանձնարարություն)

1. Հետևի՛ր եղանակին. տետրում գրանցի՛ր եղանակի փոփոխություններն ըստ օրերի:
2. Օրվա ընթացքում ե՞րբ է լինում ցողը և որտե՞ղ:
3. Ինչպե՞ս է փոխվել գիշերվա և ցերեկվա տևողությունը՝ գարնան համեմատ:
4. Ամռանը ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվում բույսերի կյանքում: Ե՞րբ են հասունանում քո սիրած մրգերը:
5. Ինչպիսի՞ փոփոխություն է կրել կենդանիների կյանքը: Ինչո՞վ են թռչունները կերակրում իրենց ձագերին: Հետևի՛ր միջատներին: Որտե՞ղ ես ամենից շատ մեղուներ և թիթեռներ տեսել: Գտի՛ր մրջնանոց, հետևի՛ր մրջյունների աշխատանքին, բայց չխանգարե՛ս, առավել ևս՝ չփորձե՛ս քանդել մրջնանոցը:
6. Ամառային ի՞նչ աշխատանքներ են կատարում մարդիկ դաշտերում, այգիներում: Ե՞րբ է կատարվում խոտհունձը: Ե՞րբ են հավաքում առաջին բերքը:

7. Մարմինդ կոփելու համար հաճախ եղիր մաքուր օդում. լողացիր ջրավազաններում (պահպանելով զգուշություն), զբաղվիր սպորտով: Հնարավորության դեպքում զբաղվիր ֆիզիկական աշխատանքով:
Բնության մեջ կատարած դիտարկումների վերաբերյալ օրագիրը պահիր հաջորդ ուսումնական տարում օգտագործելու համար:

Ես արդեն գիտեմ...

- Տարվա ամենատաք եղանակը ամառն է: Հայաստանում ամենատաք ամիսը հուլիսն է: Ամռանը ցերեկներն ավելի երկար են, քան՝ գիշերները: Տարվա մյուս եղանակների նման, բույսերի ու կենդանիների կյանքում ամռանը ևս փոփոխություններ են տեղի ունենում: Ամռանը հասունանում են մրգերը:

Հանելուկ

Ո՞ր ծառն է, որ բերք է տալիս առանց ծաղկելու:

(վղղեթ)

Դաս 16 Կրկնություն

Թեմայի կրկնության համար քեզ առաջարկվում է թեստային առաջադրանք: Ուշադիր կարդա՛ հարցը, մտածի՛ր, ապա ընտրի՛ր պատասխանի ճիշտ տարբերակը: Դժվարության հանդիպելիս նորի՛ց կարդա համապատասխան դասը:

Ինքնաստուգման թեստ

1. Երկրագունդը՝
   ա) մոլորակ է,
   բ) աստղ է,
   գ) բնական արբանյակ է:

2. Գիշերն ու ցերեկը առաջանում են, որովհետև Երկիրը պտտվում է՝
   ա) Լուսնի շուրջը,
   բ) իր առանցքի շուրջը,
   գ) Արեգակի շուրջը:

3. Տարվա եղանակներն առաջանում են, որովհետև Երկիրը պտտվում է՝
   ա) Արեգակի շուրջը,
   բ) իր առանցքի շուրջը,
   գ) Լուսնի շուրջը:

4. Աստղերը՝
   ա) երկնային սառը մարմիններ են,
   բ) լույս ու ջերմություն ստանում են Արեգակից,
   գ) ունեն իրենց սեփական լույսն ու ջերմությունը:

5. Արեգակը՝
   ա) աստղ է,
   բ) մոլորակ է,
   գ) արբանյակ է:

6. Լուսինը՝
   ա) աստղ է,
   բ) մոլորակ է,
   գ) արբանյակ է:

7. Այն ժամանակամիջոցը, որի ընթացքում Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը, կոչվում է՝
   ա) շաբաթ,
   բ) ամիս,
   գ) տարի:

8. Տարին ունի՝
   ա) երկու եղանակ,
   բ) երեք եղանակ,
   գ) չորս եղանակ:

9. Աշնանը թռչունները չվում են տաք երկրներ, որովհետև
   ա) կարճանում են ցերեկները,
   բ) նվազում է օդի ջերմությունը,
   գ) պակասում է նրանց կերը,
   դ) նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:

10. Ձմռանը նապաստակի մորթին սպիտակ գույն է ստանում, որպեսզի
   ա) աննկատ մնա որս կատարելիս,
   բ) աննկատ մնա գիշատիչ կենդանիներից,
   գ) գեղեցիկ երևա:

11. Գարնան ավետաբեր թռչուններն են՝
    ա) կաչաղակն ու ագռավը,
    բ) ճնճղուկն ու լորը,
    գ) արագիլն ու ծիծեռնակը:

12. Գարնան ավետաբեր ծաղիկը
    ա) ձնծաղիկն է,
    բ) վարդն է,
    գ) մեխակն է:

13. Գտի՛ր ճիշտ պատասխանը.
    ա) աշնանը տաք երկրներից մեզ մոտ են գալիս չվող թռչունները,
    բ) ձմռանը շատ կենդանիներ քուն են մտնում,
    գ) գարնանը տերևաթափ են լինում ծառերը և թփերը:

14. Գտի՛ր սխալ պատասխանը.
    ա) ձմռանը փշատերև ծառերից շատերը տերևաթափ են լինում,
    բ) ամռանը ծաղկում են բոլոր ծառերը և թփերը,
    գ) աշնանն ավելի տաք է, քան՝ ձմռանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I ԵՍ ԵՎ ԻՄ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ 3

Դաս 1. Ընկերություն 3

Դաս 2. Տղաներ և աղջիկներ 6

Դաս 3. Իմ իրավունքներն ու պարտականությունները 8

Դաս 4. Իմ վարքը 14

Դաս 5. Միջավայրը, ուր ես ապրում եմ 19

ԳԼՈՒԽ II ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԻՄ ԿՅԱՆՔԸ 22

Դաս 6. Իմ առօրյան 22

Դաս 7. Ժամանց 26

Դաս 8. Ինչպես եմ ես որոշում կայացնում: Իմ նպատակները 30

ԳԼՈՒԽ III ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ 35

Դաս 9. Աստղեր, Արեգակ 35

Դաս 10. Երկիր, Լուսին 39

ԳԼՈՒԽ IV ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՎԱ ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ 43

Դաս 11. Տարվա եղանակները 43

Դաս 12. Բույսերն ու կենդանիները աշնանը 46

Դաս 13. Բույսերն ու կենդանիները ձմռանը 51

Դաս 14. Բույսերն ու կենդանիները գարնանը 55

Դաս 15. Բույսերն ու կենդանիները ամռանը 60

Դաս 16. Կրկնություն 63

Արմեն Հովսեփյան, Ալվարդ Կարապետյան,
Գուրգեն Հովհաննիսյան, Նաիրա Տողանյան,
Առաքել Գյուլբուդաղյան, Լաուրա Ավագյան

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք

Դիզայնը՝ Ա. Բաղդասարյանի

Համակարգչային մուտքագրում՝ Ս. Այվազյան
Համակարգչային էջկապ՝ Ա. Բաղդասարյան

Սրբագրիչ՝ Է. Սեդրակյան

«ՄԱՆՄԱՐ» հրատարակչություն
Երևան, Ղ.Փարպեցու 9-7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@manmar.am